

## **ՀՀ Ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/5**

**27 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց Գրիգոր Հայկի Հովհաննիսյանի 28.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015 թ-ի թիվ 1295/02 որոշման դեմ:

#### **Գրիգոր Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

Գրիգոր Հովհաննիսյանը հայտնում է, որ հաշվառված է եղել էրեբունու ՀՏ-ում 01.09.2003 թ-ից՝ ՀՎՀՀ 23103175: Հաշվառումից դուրս է եկել 25.02.2013 թ-ին:

14.10.2015 թ-ին Գրիգոր Հովհաննիսյանը վերսկսել է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը, որի ժամանակ իրեն տրամադրվել է այլ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ 23165608: Արդյունքում իր նկատմամբ կազմվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015 թ-ի թիվ 1295/02 որոշումը՝ համապատասխան պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Գրիգոր Հովհաննիսյանը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015 թ-ի թիվ 1295/02 որոշումը:

#### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Գրիգոր Արիստակեսի Հովհաննիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 21.10.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 193.425 դրամ, որն ամբողջությամբ սուցիալական ապահովության վճարի գծով է: Պարտավորությունն առաջացել է 2010 թ-ի դեկտեմբերից մինչև 2012 թ-ի դեկտեմբերը ներառյալ նվազագույն սոցիալական ապահովության վճարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.10.2015 թ-ին ընդունվել է թիվ 1295/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գրիգոր Արիստակեսի Հովհաննիսյանից 193.425 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Գրիգոր Հայկի Հովհաննիսյանը /ՀՎՀՀ՝ 23103175/ 29.12.2006 թ-ին դադարեցրել է գործունեությունը (լուծարվել է): Ընդ որում, գործունեությունը դադարեցնելու պահին սոցիալական ապահովության վճարի գծով առկա է եղել գերավճար:

14.10.2015 թ-ին Գրիգոր Հայկի Հովհաննիսյանը կրկին անգամ գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, որի հետևանքով նրան ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրվել է հարկ վճարողի հաշվառման

նոր համար: Մասնավորապես, Գրիգոր Հայկի Հովհաննիսյանին տրամադրվել է Ա/Ձ Նվեր Արիստակեսի Մարտիրոսյանի ՀՎՀՀ-ն՝ 23165608, որը սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություններով 25.02.2013 թ-ին լուծարվել է:

Տվյալ դեպքում Որոշման մեջ նշված ՀՎՀՀ-ն 23165608 և հասցեն պատկանել են Ա/Ձ Գրիգոր Հայկի Հովհաննիսյանին, իսկ պարտավորության կրողը հանդիսացել է Ա/Ձ Նվեր Արիստակեսի Մարտիրոսյանը: Ընդ որում, Ա/Ձ Նվեր Արիստակեսի Մարտիրոսյանի վերաբերյալ տվյալները պետական ռեգիստրի կողմից փոփոխվել են Ա/Ձ Գրիգոր Արիստակեսի Հովհաննիսյանի, ինչը և հիմք է հանդիսացել վերջինիս վերաբերյալ Հարկատու 3 համակարգում տեղեկությունների առկայության և դրա հետևանքով նաև Որոշումը կայացվելու համար:

Արդյունքում Ա/Ձ Գրիգոր Հայկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.10.2015 թ-ին կայացված թիվ 1295/02 որոշումը ուղարկվել է Ա/Ձ Գրիգոր Հայկի Հովհաննիսյանի հասցեով՝ ք.Երևան, Էրեբունու 11, բն. 46, որն էլ ստանալով Որոշումը ներկայացրել է սույն գանգատը:

Միևնույն ժամանակ նշվեց, որ Էրեբունու ՀՏ պետի կողմից 16.04.2014 թ-ին կայացվել է թիվ 739 որոշումը Ա/Ձ Նվեր Արիստակեսի Մարտիրոսյանից 193.438 դրամի չափով սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը գանձելու վերաբերյալ, որն ուղարկվել է ԴԱՀԿ ծառայություն՝ կատարման:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ սոցիալական ապահովության վճարի գծով վերոգրյալ պարտավորությունը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015 թ-ի թիվ 1295/02 որոշմամբ գանձման է առաջադրվել երկրորդ անգամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.10.2015 թ-ի թիվ 1295/02 որոշումը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

